

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

20.02.2017թ.

ժ.11: 00

*Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Ասանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Ա.Սաֆյան, (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար):*  
*Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխարհակազմի ղեկավար), Գ.Մուրադյան (իրավաբանական բաժին), Մ. Երիցյան (գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ), Լ.Մարկոսյան (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ):*

**Օրակարգի նախագծում հինգ հարց.**

1. «Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականին սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը հաստատելու (համաձայն հավելվածի), և սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար 2016 թվականի ղեկտեմբեր ամիսը որպես բազիսային ժամանակահատված ընդունելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Մ.Երիցյան/*

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ, ինչպես նաև քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» թիվ 229-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2008-2015 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունների անվանագրքով ավարտների բազաները Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2017 թվականի փետրվարի 1-ից 8-ը «Բազմացուցանիշային քլաստերային հետազոտության նոր գործիքակազմին և չափորոշիչներին ինչպես նաև երեխաների և կանանց բարեկեցությունը բնութագրող ցուցանիշների միջազգային մեթոդաբանությանը ծանոթանալու վերաբերյալ»:

4.2. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2017 թվականի փետրվարի 14-ից 15-ը Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի նիստին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ս.Մնացականյան/*

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

### **Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականին սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական գամբյուղի կազմը և կառուցվածքը հաստատելու (համաձայն հավելվածի), և սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար 2016 թվականի դեկտեմբեր ամիսը որպես բազիսային ժամանակահատված ընդունելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Մ.Երիցյան/*

### **Որոշեցին՝**

հաստատել 2017 թվականին սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական գամբյուղի կազմը և կառուցվածքը (համաձայն հավելվածի), և սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար 2016 թվականի դեկտեմբեր ամիսը սահմանել որպես բազիսային ժամանակահատված:

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

### **Լսեցին՝**

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ, ինչպես նաև քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» թիվ 229-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

### **Որոշեցին՝**

հաստատել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն որոշումը:

*/Նորմատիվ/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

### **Լսեցին՝**

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2008-2015 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունների անվանագրքով անվանագրքով տվյալների բազաները Հետազոտական ռեսուրսների կոմկապյան կենտրոն-Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

### **Որոշեցին՝**

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հետազոտական ռեսուրսների կոմկապյան կենտրոն-Հայաստան հիմնադրամին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008-2015 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

## **Լսեցին՝**

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2017 թվականի փետրվարի 1-ից 8-ը «Բազմացուցանիշային քլաստերային հետազոտության նոր գործիքակազմին և չափորոշիչներին ինչպես նաև երեխաների և կանանց բարեկեցությունը բնութագրող ցուցանիշների միջազգային մեթոդաբանությանը ծանոթանալու վերաբերյալ»:

4.2. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2017 թվականի փետրվարի 14-ից 15-ը Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի նիստին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ս.Մասցակսյան/*

## **Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ